ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՏԱԹԵՎԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երեխաների խնամազրկությունը սոցիալական նոր երևույթ չէ. այն տարատեսակ դրսևորումներով գոյություն ունի անհիշելի ժամանակներից: Հասկանալի պատճառներով այն հետաքրքրության օբյեկտ է գրեթե բոլոր հասարակական գիտությունների համար՝ մարդաբանությունից մինչև սոցիոլոգիա, պատմագիտությունից մինչև իրավագիտություն և մանկավարժություն:

Խնամազրկության երևույթի տերմինաբանության շուրջ քննարկումը ինչպես գիտական գրականության մեջ, այնպես էլ պաշտոնական փաստաթղթերում ստեղծել է որոշակի խառնաշփոթ: Պատճառն այն է, որ հայ իրականության մեջ բազմաթիվ հասկացություններ ունեն իրենց հոմանշային զուգաձևությունները, կամ էլ բացակայում են այս երևույթը արտացոլող բոլոր իրավիճակների համար կիրառելի տերմինները:

Երեխայի խնամազրկությունը նկարագրելու համար պաշտոնական փաստաթղթերում և մասնագիտական գրականությունում կիրառվում են տարբեր եզրույթներ, օրինակ՝ «ծնողազուրկ երեխա», «լքված երեխա», «որբ», «սոցիալական որբ», «ընտանեկան խնամքից զրկված երեխա», «առանց ծնողական խնամքի մնացած երեխա», «կյանքի դժվարին վիճակում հայտնված երեխա» և այլն: Մեթոդական աղբյուրներում, փորձ անելով ազատագրվել ավելորդ հուզականությունից և մասնագիտական բառապաշար օգտագործելու մղումով, սովորաբար գործածվում է «ընտանիքից դուրս մեծացող երեխա», «փոխարինող խնամքի ներքո գտնվող երեխա», «ֆորմալ խնամքի ներքո գտնվող երեխա» և այլն: Այս եզրույթների մի մասը, օրինակ՝ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա», նշանակում է կարգավիճակ, մինչդեռ, օրինակ՝ «կյանքի դժվարին վիճակում հայտնված երեխա», «սոցիալական որբ» և այլ եզրույթներ նկարագրում են իրավիճակ:

Այնուամենայնիվ, այս եզրույթներից որևէ մեկը կամ դրանց տարբեր համախմբություններն անգամ չեն արտացոլում խնամազրկության երևույթի դրսևորման ձևերի ողջ ծավալը:

Ըստ այդմ՝ սույն հոդվածում փորձ է արվում առաջարկել խնամազրկության երևույթի դասակարգման այնպիսի մոտեցում, որը թույլ կտա զերծ մնալ միայն կարգավիճակ կամ միայն իրավիճակ նկարագրող եզրույթների սահմանափակումներից և ներդնել խնամազրկության մեկնաբանման ավելի ամբողջական ու բովանդակային մոտեցում:

Հիմնական խոսույթը պետք է ծավալվի երկու առանցքի շուրջ՝ «փաստացի (դե ֆակտո) վիճակ - կարգավիճակ» և «խնամող մեծեր – խնամվող փոքրեր»: Ընդ որում, այս առանցքները կարող են հայտնվել տարբեր ուղեծրերում՝ ընտանիք, բարեկամ ընտանիք, ծանոթ փոխարինող ընտանիք, անծանոթ փոխարինող ընտանիք և պարզապես փոխարինող մեծեր:

«Խնամող մեծ - խնամվող փոքր» առանցքը նախ և առաջ ենթադրում է խնդրի դիտարկում ընտանիքի շրջանակներում, քանի որ վերջինս, անկախ տվյալ հասարակությանը բնորոշ կարգից ու գերակայող մշակույթից, սոցիալական այն միջավայրն է, որտեղ երիտասարդ սերնդին պաշտպանում են և հասկանում[1]: Հասարակության «սոցիալական պատվերի» շրջանակում ընտանիքն իրագործում է ոչ միայն իր անդամների պարզ սերնդափոխությունը, այլև նոր անդամների նախապատրաստումը սոցիալապես ընդունելի ինքնուրույն և ինքնաբավ կյանքի՝ նրանց համար ստեղծելով ինքնադրսևորվելու, փորձարկելու և աշխարհը ճանաչելու անհրաժեշտ նախապայմաններ[2]:

Խնամքի ու դաստիարակության[3] գործառույթն այնքան ներհատուկ է ընտանիքին, որ ամենևին էլ պատահական չէ «ընտանիք» հասկացության սահմանումներում դրա ընդգծված լինելը: Այսպես. «Ընտանիքը արյունակցական, ամուսնական կամ որդեգրման կապերի վրա հիմնված մարդկանց միավորում է, որոնք ունեն ընդհանուր կենցաղ, կիսում են նույն կացարանը և պատասխանատվությունը երեխաների խնամքի համար»[4], կամ՝ «Ընտանիքը փոխադարձ հարազատական կապեր ունեցող մարդկանց խումբ է, որտեղ ավագ անդամները ստանձնում են կրտսերների խնամքը»[5]:

Սակայն որքան էլ խնամքի ու դաստիարակության այդ գործառույթը ներհատուկ և բնական լինի ընտանիքի համար, դրա իրականացումն ուղղակիորեն կապված է հասարակության և հենց ընտանիքի անդամների՝ ընտանիքի դերի և նպատակների վերաբերյալ պատկերացումների և սոցիալական սպասումների հետ: Այս համատեքստում,

---

[1] Տե՛ս **Гидденс Э.** Социология. Изд. 2-е, полностью перераб. и доп. М.: 2005, Едиториал УРСС, էջ 275:

[2] Փաստորեն, սոցիալական գործառմանը նախապատրաստելու՝ վերը նշված գործառույթը կարող է իրականացվել ոչ միայն խնամող ծնողի, այլ նաև որևէ խնամող մեծի աջակցությամբ: Ըստ այդմ, ծնողների բացակայությունը, երեխայի հետ չլինելը, անմիջականորեն երեխայի խնամքով կամ դաստիարակությամբ չզբաղվելը էական հետևանքներ չեն ունենա, եթե որևէ հիմնական փոխարինող կամ մեր բնորոշմամբ՝ «խնամող մեծ» իրականացնի այդ նախապատրաստումը:

[3] Ի դեպ, **խնամք** և **դաստիարակություն** եզրույթները իրենց հերթին մեկնաբանվում են հետևյալ կերպ. խնամքը ենթադրում է երեխայի առաջնային կարիքների բավարարում, դաստիարակությունը՝ սոցիալապես ընդունելի ինքնուրույն և ինքնաբավ կյանքի նախապատրաստում: Սակայն գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել խնամք բառի (care)՝ լայն իմաստով գործածության, որը ենթադրում է թե՛ մեկը, թե՛ մյուսը:

[4] **Смелзер Н**. Социология. М.: Феникс, 1994, с. 392.

[5] **Гидденс Э.**, նշվ. աշխ., էջ 275:

արժե հղում անել բրիտանացի գիտնական Սպենսին, որը դեռևս նախորդ դարի կեսերին, անդրադառնալով ընտանիքի ինստիտուտի դերին ու նպատակներին, նշել է, որ ընտանիքը յուրահատուկ խումբ է առնվազն այն պատճառով, որ այնտեղ երկու «անտեսանելի» ուժ է գործում: Առաջինը ծնողի բնազդն է, որը երեխայի խնամքն ապահովելու՝ բնությունից տրված նախապայման է, իսկ երկրորդը ներընտանեկան մշակույթն է, որը սերնդեսերունդ փոխանցվում է ավագներից կրտսերներին՝ «չգրված օրենքների» տեսքով: Սպենսի համոզմամբ՝ ընտանիքը երեխայի խնամքի կազմակերպման տեսանկյունից՝ ծառայում է 4 հիմնական նպատակի իրականացմանը[6].

1) երեխայի առողջությանը և տարիքին համապատասխան ֆիզիկական աճի ապահովում,

2) երեխայի հուզական առողջ զարգացման ապահովում՝ նրան հնարավորություն տալով տան անվտանգ միջավայրում ապրելու հնարավորինս տարբեր հույզեր,

3) «մայրության արվեստի» պահպանում, որը նշանակում է երեխաների բուն խնամքի իրականացում,

4) երեխային հասարակությունում ընդունելի վարքաձևերի ուսուցանում:

Փաստորեն, ոչ բոլոր ընտանիքներին է հաջողվում վերը նշված նպատակները լիարժեք և արդյունավետ իրականացնել: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ նպատակներից որևէ մեկի կամ դրանցից մի քանիսի ոչ լիարժեք իրականացումը կարելի է անվերապահորեն բնորոշել խնամազրկություն: Սրա առնչությամբ Բոուլբին նշում է, որ ընտանեկան խնամքից կամ վերջինիս բացակայությունից խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

1) որքանո՞վ է ընտանիքն աջակցում երեխային՝ բավարարելու իր կենսաբանական առաջնային պահանջմունքները (սնունդ, ջերմություն, կացարան և այլն),

2) արդյո՞ք երեխային տրված է անհրաժեշտ միջավայր իր ֆիզիկական, մտավոր և սոցիալական կարողությունները զարգացնելու համար[7]:

Ուստի, մեր համոզմամբ, ընտանիք ասելով կարելի է հասկանալ միջավայր, որտեղ երեխան լայն իմաստով խնամք է ստանում, և ցանկալի, բայց պարտադիր չէ, որ «խնամող մեծերը» լինեն հենց «խնամվող փոքրերի» ծնողները: Ուստի պարտադիր չէ, որ ծնողներից զրկվելը (կարգավիճակ) հանգեցնի խնամազրկության (իրավիճակ): **Խնամազրկությունը** երեխա-ծնող (երեխա-խնամող մեծ) ոչ բավարար կամ ոչ որակյալ կապվածության հետևանք է, որն առնվազն երեք գործոնների ազդեցություն

---

[6] Տե՛ս **Spence J. C.** The purpose of the family: a guide to the care of children, Convocation lecture of the National Children's Home, London, 1946, էջ 33-34:

[7] Տե՛ս **Bowlby J. & World Health Organization**, Maternal care and mental health: a report prepared on behalf of the World Health Organization as a contribution to the United Nations programme for the welfare of homeless children, 2nd ed. World Health Organization, 1952, էջ 72:

է կրում՝ երեխայի անհատական բնութագրիչները, ծնողի կամ խնամողի անհատական բնութագրիչները կամ ծնողավարման –խնամքի (լայն իմաստով) համակարգը և ծնող-երեխա (կամ երեխա-խնամող մեծ) փոխհարաբերությունների դինամիկան[8]:

Երեխաների լքման, դեպրիվացիայի վերաբերյալ գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **խնամազրկություն** հասկացությունն իր բովանդակությամբ լիովին համադրելի է մայրական, ընտանեկան դեպրիվացիա (զրկում) հասկացությունների հետ:

Համաձայն Բոուլբիի՝ առանձնացվում են երեխաների խնամքի դեպրիվացիայի/զրկման հետևյալ տիպերը.

1) Մասնակի դեպրիվացիա, երբ երեխան ապրում է ծնողի (Բոուլբին շեշտում է հատկապես մոր դերը) կամ հիմնական խնամողին փոխարինողի հետ, սակայն փոխհարաբերությունները խաթարված են:

2) Լրիվ դեպրիվացիա, երբ ծնողի մահվան, հիվանդության կամ լքման հետևանքով երեխան կորցրել է նրան կամ հիմնական խնամողին, և նրանց փոխարինելն անհնար է:

3) Ծնողից կտրելու հետ կապված լրիվ դեպրիվացիա, երբ երեխան անջատվում է իր ծնողներից՝ ծնողի անհատական կամ պաշտոնական որոշումների պարտադրանքով[9]:

Եթե հետևենք այս տրամաբանությանը, ապա ստացվում է, որ առաջին երկու մակարդակներում գործ ունենք խնամքի այս կամ այն չափի թերացումների հետ, իսկ երրորդ դեպքում՝ բուն խնամազրկության: Փաստորեն, խոսքը խնամազրկության տարբեր մակարդակների մասին է, որտեղ լրիվ դեպրիվացիան ենթադրում է նաև կարգավիճակ, մինչդեռ մասնակի դեպրիվացիան՝ ոչ:

Մալխասյանցի բացատրական բառարանում «զրկել» նշանակում է՝ 1) անիրավացի կերպով որևէ մեկի չտալ այն, ինչն իրեն հասանելի է կամ 2) իբրև պատիժ՝ մեկից խլել մի կարևոր բան, արտոնություն[10]: «Խնամազրկություն» հասկացության տեսանկյունից նման մեկնաբանությունները լիովին կիրառելի են: Եթե խոսում ենք «որևէ մեկի այն չտալու մասին, ինչն իր հասանելիքն է», ապա այս դեպքում ակնհայտ է, որ ոտնահարվում է երեխայի հիմնարար իրավունքը՝ ծնողական, ընտանեկան խնամք ստանալու, կամ այլ կերպ ասած՝ նա զրկվում է իրեն «հասանելիք» խնամքից: Երկրորդ մեկնաբանությունը առավել կիրառելի է որոշակի դեպքերում, երբ ծնողի կողմից խնամազրկությունը կիրառվում է որպես սպառնալիք կամ պատիժ՝ երեխային լավ վարքի դրդելու նպատակով կամ մեկ այլ հիմնավորմամբ:

---

[8] Տե՛ս **Parker G., Tupling H.** and **Brown L. B.**, A Parental Bonding Instrument, British Journal of Medical Psychology (1979), № 52, 1-10, էջ 1:

[9] Տե՛ս **Bowlby, John & World Health Organization,** նշվ. աշխ., էջ 71:

[10] Տե՛ս **Ս. Մալխասեանց,** Հայերէն բացատրական բառարան, 1-4 հատորներ, Եր., 1944-1945, էջ 40:

Տեղական պրակտիկայում խնամազրկության երևույթը բնութագրելիս օգտագործվող ամենատարածված հասկացություններից մեկը «որբն» է, որը Մալխասյանցի նույն բառարանում սահմանվում է որպես ծնողներին կամ ծնողներից մեկին կորցրած[11]: Այն համընկնում է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից «որբ» հասկացության մեկնաբանությանը: Միևնույն ժամանակ նույն աղբյուրում ասվում է, որ որոշ երկրներում «ծնողազրկություն» ասելով նկատի է առնվում միայն երկու ծնողներին կորցրած երեխան[12]: Փաստորեն խնամազրկությունը երեխայի՝ ընտանեկան կամ խնամող մեծերի խնամքից վերջնականորեն զրկված լինելու վիճակն է, մինչդեռ ծնողազուրկը կամ որբը ենթադրում է ծնողների բացակայություն, սակայն պարտադիր չէ, որ ենթադրի խնամազրկություն:

ՄԱԿ-ի Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցում **ծնողական խնամքից զրկված երեխա** հասկացությունը սահմանվում է որպես *ցանկացած երեխա, որը անկախ պատճառից կամ ստեղծված իրավիճակի հետևանքով գիշերում է իր ծնողներից հեռու*[13]: Հասկացության նման մեկնաբանությունը շատ օգտակար է, երբ ցանկանում ենք դիտարկել երևույթի տարատեսակ դրսևորումները: Օրինակ՝ մեր պարագայում՝ արդյո՞ք հատուկ դպրոցներում գտնվող երեխաներին, որոնք արձակուրդներին ոչ միշտ են տուն վերադառնում կամ ընդհանրապես տուն չեն վերադառնում, դիտարկում ենք ծնողական խնամքից զրկված երեխաներ, թե՞ դա վերաբերում է միայն մանկատանը գտնվող երեխաներին:

Լեզվամշակութային մտածողության՝ տեղի առանձնահատկություններին համապատասխան՝ ծնողական խնամքի թերացումներից տուժող երեխաների առնչությամբ հետանկախության տարիներին բավական երկար ժամանակ կիրառվում էր **սոցիալական որբ** հասկացությունը: Սոցիալ-մշակութային և տնտեսական նման խորքային արմատների պարագայում[14] միջազգային կազմակերպությունների ջանքերով և մասնագիտական հանրույթի ճնշումների ներքո այդ բառակապակցությունը փոխարինվեց «**կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա»** եզրույթով:

Կյանքի դժվարին իրավիճակը սահմանվում է որպես հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտա-

---

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 580:

[12] Տե՛ս Orphans, 16 June 2017, https://www.unicef.org/media/orphans

[13] Տե՛ս **Guidelines for the Alternative Care of Children**, Resolution adopted by the General Assembly, United Nations, Sixty-fourt Session, Agenda item 64, 24 February, 2010, Article 29a, էջ 6:

[14] Տե՛ս **Sara A. Dillon,** The Missing Link: A Social Orphan Protocol to the United Nations Convention on the Rights of the Child, Human Rights and Globalization Law Review, Vol. 1, p. 39, 2008, էջ 1:

կարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող[15]:

Նման սահմանման մեջ մեր կողմից ուսումնասիրվող խնդրի շրջանակներում կարևոր է այն հանգամանքի առանձնացումը, որ հիմնախնդրի ուժգնության տեսանկյունից «**կյանքի դժվարին իրավիճակ**» հասկացությունը մյուսների համեմատությամբ կարելի է կիրառել նաև ռիսկայնության ավելի ցածր մակարդակի պարագայում, սակայն այստեղ մեկ այլ խնդիր կա՝ հասկացության ընդգրկման չափազանց լայն շրջանակը:

Որպես իրավական կարգավիճակ մեր երկրում օգտագործվում է **«առանց ծնողական խնամքի մնացած երեխա»** (ԱԾԽՄ) հասկացությունը. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի համաձայն. ԱԾԽՄ է համարվում 18 տարին չլրացած (որոշ դեպքերում մինչև 23 տարեկան) այն անչափահասը, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացության վերը նշված սահմանումը մի շարք սահմանափակումներ ունի, մասնավորապես՝

- սահմանումը մատնանշում է միայն այն դեպքերը, որոնք կարող են իրավական ձևակերպում ստանալ, հետևաբար դրանք չեն կարող արտացոլել խնամազրկության ողջ տեսականին,
- խնամքի որակը հարցականի տակ դնող իրավիճակները ձևակերպված են «երեխաների դաստիարակությունից խուսափել» կամ «նրանց շահերից և իրավունքներից չգործել» արտահայտություններով, որոնց հիմնավորումը պրակտիկայում գրեթե անհնար է,
- բացի այդ, սահմանումը հնարավորություն չի տալիս հստակեցնելու խնամազրկության հանգեցնող ռիսկերն ու մակարդակները և արձանագրում է միայն վերջնական «արդյունքը»՝ խնամքից զրկված լինելու բուն հանգամանքը:

Նման անհստակությունը սահմանափակում է վաղ միջամտությունների հնարավորությունը, մինչդեռ հայտնի է, որ կապվածության թերացումների երևան գալու և կապվածության վերջնական ընդհատման միջև ժամանակահատվածի ձգձգումները էական ազդեցություն ունեն: Բացի այդ, նոր, կայուն կապվածություն ձևավորելու նպատակով միջամտության հապաղումները հանգեցնում են այլ մարդկանց

[15] Տե՛ս «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 2:

հետ փոխհարաբերություններում դժվարությունների, որոնց հետևանքները կարող են անդառնալի լինել: Փաստորեն, սահմանման մեջ ներառված բոլոր բնութագրիչները վերաբերում են ծնողի վարքագծային ձևերին. ծնողը խուսափում է, անհայտ բացակայում է և այլն, մինչդեռ այս սահմանումը չի արտացոլում այն հանգամանքը, թե ծնողի նման վարքագծի կամ անգործության ու մահվան հետևանքով երեխան խնամազո՞ւրկ է արդյոք, թե՞ ոչ: Ավելին, ստացվում է, որ օրենքը կարգավիճակի հարց է լուծում, հետևաբար նաև՝ պետական սոցիալական երաշխիքների հարց՝ առանց տարբերակելու նշված փաստի և հանգամանքների իրական ազդեցությունը երեխաների վրա: Հետևաբար պետական աջակցության հիմք հանդիսացող վերը թվարկված հանգամանքները տրամաբանության չեն դիմանում, ուստի բազմաթիվ հարցեր են առաջ գալիս պետության միջամտության ձևերի, չափերի, հասցեականության առումով: Ահա ինչու մենք պնդում ենք՝ պարտադիր չէ, որ ծնողազուրկ լինելը նշանակի խնամազուրկ: Այլ խոսքով՝ իրավական կարգավիճակը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է՝ նկարագրելու երեխայի իրավիճակը խնամքի համատեքստում:

Առավել կիրառելի մոտեցում ունենալու նպատակով խնամազրկությունն անհրաժեշտ է դիտարկել երեխաների պաշտպանության մակարդակների[16] և երեխայի կարիքների գնահատման եռանկյունու[17] համատեքստում՝ քննության առնելով հետևյալ հանգամանքները՝

- ծնողների՝ երեխաների խնամքն իրականացնելու պատրաստակամությունը և կարողությունը,
- երեխա-ծնող փոխհարաբերությունների դինամիկան՝ հաշվի առնելով երեխային լքելու, անտեսելու հետ կապված նախկին դեպքերի առկայությունը կամ բացակայությունը,
- երեխայի և նրա ծնողների սոցիալական միջավայրում խնամքի կազմակերպման փոխարինող տարբերակների հասանելիությունը՝ ի դեմս ընտանիքի մտերիմների և հարազատների:

Այսպիսով, խնամազրկությունը կարելի է սահմանել որպես *երեխայի՝ իր ծնողների կամ նրանց փոխարինող հիմնական խնամակալների կողմից երեխայի խնամք իրականացնելու պատրաստակամության և կարողության մակարդակով պայմանավորված խնամք ստանալու անհնարինության վիճակ, որի դեպքում վտանգված է երեխայի զարգացման կարիքների բավարարումը:*

Այս իմաստով խնամազրկության երևույթի պարզ դասակարգման անհրաժեշտություն կա, որի օրինակը կարող է լինել երեխայի խնամազրկությունը նկարագրող ներքոշարադրյալ առաջարկը:

---

[16] Տե՛ս Staffordshire's Threshold Framework: "Accessing The Right Help At The Right Time", Multi-Agency Guidance On The Access Criteria To Help Support Children, Young People And Families, April 2012:

[17] Տե՛ս "Framework For The Assessment Of Children In Need And Their Families, Department Of Health Department For Education And Employment Home Office", London, 2000, էջ 17:

Հաշվի առնելով հասկացությունների և դրանց մեկնաբանման շուրջ հոդվածում տեղ գտած քննարկումը՝ խնամազրկության երևույթի դասակարգումը հետևյալ չորս հիմքերի վրա է կառուցվում՝

- խնամազուրկ դառնալու հանգամանքները,
- խնամազրկության բնույթը,
- նախորդ խնամողի/ծնողի հետ հարաբերությունների առկայությունը և որակը,
- փոխարինող անձի հետ հարաբերությունների առկայությունը և որակը։

Այսպիսով, ըստ **խնամազուրկ դառնալու հանգամանքների հիմքի** առանձնացվում են.

- ծնողի (խնամող մեծի) մահ,
- ծնողի (խնամող մեծի)՝ խնամելուց հրաժարում կամ խնամելու ցանկության բացակայություն,
- ծնողի (խնամող մեծի)՝ խնամք իրականացնելու անկարողություն՝ ֆիզիկական կամ հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված,
- ծնողի (խնամող մեծի)՝ խնամք իրականացնելու անհնարինություն՝ դատապարտված լինելու կամ այլ հիմքերով։

Ըստ խնամազրկության «իրականացման» բնույթի՝

- ծնողի (խնամողի) կողմից նպատակադրված-ինքնակամ գործողություն,
- պարտադրված գործողություն,
- քրոնիկ կրկնվող՝ զրկում-վերականգնում-զրկում գործողությունների շարք։

Ըստ խնամող ծնողի (խնամող մեծի) հետ ունեցած կապի և դրա որակի՝

- դրական-կառուցողական,
- քրոնիկ-փոփոխական,
- ապակառուցողական,
- կապի բացակայություն։

Ըստ փոխարինող անձի հետ հարաբերությունների որակի՝

- կապի ամրություն և կայունություն,
- կապի փոփոխականություն՝ քրոնիկ կապեր,
- անկայուն կապ,
- վնասող կապ,
- կապի բացակայություն։

Այսպիսով, երևույթի մեկնաբանմանն ուղղված հասկացությունները պետք է լինեն ոչ թե համընդհանուր կիրառման (ըստ այդմ սահմանափակելով յուրաքանչյուր իրավիճակին արձագանքելու և համարժեք

սոցիալական երաշխիքներ տրամադրելու հնարավորությունը), այլ համադրեն տեղի ունեցածի բովանդակությունը, արտացոլող հանգամանքները և հիմնավորումները, ինչը թույլ կտա գործնականում ստեղծել որոշակի իրավիճակին համապատասխանող որոշումներ կայացնելու հնարավորություն: Նման դասակարգումը օգնում է ոչ միայն պարզապես արձանագրելու իրավական ամրագրումներ, այլև բնութագրելու դրանից հետո ստեղծված իրավիճակը:

Այսպիսով, խնամազրկությունը տարբեր երեխաների դեպքում ունի տարբեր դրսևորումներ՝ պայմանավորված տեղի ունեցածի հանգամանքներով: Դրանց չափումների վերաբերյալ դատողություններն ու համապատասխան գործիքների առաջքաշումը սույն հոդվածի քննարկման շրջանակից դուրս են: Ակնհայտ է, սակայն, որ խնամող մեծի հանգամանքը այն բուֆերն է, որը թույլ է տալիս մեղմացնել կարգավիճակից բխող՝ ենթադրվող ոչ ցանկալի հետևանքները: Խնամազրկության երևույթին առնչվող եզրույթների վերաբերյալ սույն խոսույթը հետագա զարգացումների կարիք ունի ակադեմիական բյուրեղացումների, մասնագիտական ընկալումների և սոցիալական քաղաքականության հնարավոր համապատասխանեցումների առումով:

Բանալի բառեր – *խնամազրկություն, դեպրիվացիա, ծնողազուրկ երեխա, խնամող մեծ, խնամող ծնող, ընտանեկան խնամք, ծնողական խնամք*

ТАТЕВИК КАРАПЕТЯН – *О терминологических проблемах феномена детей, лишённых опекунства.* – В статье подняты терминологические вопросы, порождённые феноменом лишённых опекунства детей. На основе контекстного анализа основных понятий предлагается новый подход к интерпретации названного выше феномена. Подход заключается в том, что, с одной стороны, рассматриваются отношения «взрослый опекун – опекаемый ребёнок», а с другой – «де-факто ситуация и приписанный социальный статус», причём последнее обусловлено лишением опекунства.

Ключевые слова: *лишение опекунства, депривация, сирота, взрослый опекун, родитель опекун, семейное попечение, родительское попечение*

TATEVIK KARAPETYAN – ***On Terminological Issues Related to the Phenomenon of Children Deprived of Guardianship.*** – The article discusses terminological issues related to the phenomenon of children deprived of guardianship. As a result of a contextual analysis of the basic concepts used in the article, the author proposes a new approach to the interpretation of the phenomenon. It is based on two main dimensions: 1) the concept of carelessness in the context of "adult-carer" and "child under care" and 2) in the frame of "de facto carelessness" vs "obtained social status" as a result of carelessness.

Key words: *carelessness, deprivation, children without parental care, child, adult-carer, parent-carer, family, family care, parental care*

Ներկայացվել է՝ 05.09.2019
Գրախոսվել է՝ 02.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019